

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՁԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ
ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2006

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են պատկանում նաև «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Սեր և արժանապատվություն», «Կգան բազում արշալույսներ» և «Սիրո ուսուցիչը» վիպակները, որոնք նշանավորեցին հայ առաջին սիրավեպերի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ

Զգացմունքների ներդաշնակություն: - Եր.: Գիտանք, 2006 - 144 էջ.

Ո՞ր երգչուհին չի երազում ելույթ ունենալ աշխարհահռչակ բեմերում... Նվիրական փափագները երբեմն կատարվում են. նշանավոր նվագավար Մայքլ Քեթենջյանը հեքիաթի ասպետի պես եկավ, որ Շաքեին օգնի իրականացնելու իր երազանքը: Եվ ինչո՞ւ պետք է հատկապես այդ տղամարդը խռովեր նրա հոգին... Շաքեմ իր կյանքում հիասթափություններ շատ էր ապրել և վախենում էր վստահել տղամարդկանց: Իսկ եթե լսի իր սրտի ձայնը: Միգուցե արժե՞ խիզախել...

ISBN 99930-806-6-7

© Կարինե Աղաբեկյան, 2000, 2006

Նկարը՝ Մ. Խարբերտյանի

Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբեկյանի

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները մտացածին են, ուստի իրական անձանց ու դեպքերի հետ բոլոր զուգահիսությունները զուտ պատահականություն են:

Գլուխ 1

Աշնան մառախլապատ երեկոն իջել էր Նյու Յորքի վրա: Պատուհանի մոտ կանգնած տղամարդու մտասույզ, ոչինչ չնկատող հայացքն ուղղված էր դուրս՝ մշուշում փայլատակող գովազդերի գունավառ լույսերին: Նա մի մեծ կուռ արեց իր ձեռքի բաժակից, սակայն ոսկեգույն թունդ խմիչքը, որ կոկորդը այրելով ներս սահեց, չմեղմացրեց հոգու ցավը:

Մայքլը դեռ թաղման արարողության տպավորության տակ էր: Նա խորապես սգում էր այն մարդու մահը, որին բացի ուսուցիչ ու հովանավոր համարելուց, իրավամբ կարող էր հայր անվանել: Տղամարդու աչքերը լցվեցին: Ինչո՞ւ ճակատագիրն այդքան անգութ եղավ նրա նկատմամբ...

Սիրելի բարեկամս, ինչ էլ որ լինի, եթե անգամ պարզվի, որ գովեստներդ չափազանցված են, ես կկատարեմ քո վերջին ցանկությունը, մտովի խոստացավ նա և խոր հոգոց հանելով՝ հորդորեց իրեն. իսկ հիմա ավելի լավ է՝ ենթադրություններ անելու փոխարեն դիտեմ նրա տված տեսանկյունը:

Մայքլը վերջին կուռով դատարկեց բաժակը և դրեց պատուհանի գոգին: Ցավոք, վերջին օրերի տխուր խառնաշփոթում տեսանկյունը դիտելու ժամանակ չէր ունեցել: Տվյալ պահին դա ամենակարևոր բանն էր և հարկավոր էր շտապել. հիշատակի համերգից հետո թռչելու էր Փարիզ:

Տեսնես, որտե՞ղ եմ պահել: Երեք օր առաջ այնպիսի վիճակում էր, որ ինքն էլ չէր գիտակցում, թե ինչ է անում: Մայքլը արագ մոտեցավ հանգստի անկյունին ու սկսեց փնտրել: Նրա ուրոնումները պսակվեցին հաջողությամբ: Լավ է, բախտի բեր-

մամբ չէր հասցրել խորքերում թաքցնել. ներքևի դարակում էր: Նա տեսաերիզը դրեց տեսագրիչի մեջ և վերցնելով կառավարման վահանակը՝ հարմար ընկողմանեց բազկաթռոչին: Չէր հասցրել կոճակը սեղմել, հնչեց դռան անսպասելի զանգը: Փափուկ տեղից դժկանությամբ ելնելով՝ Մայքլը մոտեցավ ներքնախոսին:

- Ո՞վ է, - հարցրեց դժգոհ ձայնով:

- Մայքլ, բաց արա, ես եմ:

- Ա՞լիս...

Նա սեղմեց շքանուտքի դռան կոճակը և մի քանի րոպե անց ներս թողեց Ալիսին, որն ինչպես միշտ խնամքով շարված ու հարդարված՝ շատ հրապուրիչ տեսք ուներ: Ոսկեհեր կիճը ներս մտավ՝ իր շուրջը տարածելով թանկարժեք օծանելիքի քաղցրավուն բույրը, և անմիջապես փարվեց նրան:

- Ա՛հ, սիրելիս, ցավում եմ, չկարողացա գալ թաղմանը: Գիտես, չէ՞...

Այո՛, հորդ կազմակերպած ընդունելությունը քեզ համար ամենակարևոր բանն է: Մի՞թե դու բաց կթողնեիր բարձրաշխարհիկ հասարակության մեջ փայլելու հնարավորությունը, դառնությամբ մտածում էր տղամարդը, մինչ Ալիսը շարունակում էր արդարանալ: Դժվար պահին լինել սիրեցյալի կողքին, որը գուցե քո կարիքն ուներ, նրա ցա՞վը բաժանել, կարեկցե՞լ...

Օ՛, ո՛չ, այդ ամենին դու ընդունակ չես:

- Մայքլ, ինչի՞ մասին ես մտածում, դու ինձ չե՞ս լսում, - քմահաճորեն բողբոջեց Ալիսը, - իսկ ես կարծում էի, թե ինձ տեսնելով կուրախանաս:

Մայքլն ազատվեց նրա գրկից.

- Ալիս, ես ժամանակ չունեմ, ասա՛, ինչո՞ւ ես եկել: Ի՞նչ պատահեց, որ ինձ հիշեցիր, ընդունելությունն էր ձանձրալի, -

քանահրանքով հարցրեց նա:

- Բուլորովին էլ՝ ո՛չ, շատ էլ հետաքրքիր էր: - Ալիսը նեղացած փքեց շուրթերը, - ես ամեն ինչ թողեցի, հատուկ եկա քեզ մոտ, իսկ դու... - Նա կրկին գրկեց Մայքլին և իր ջերմ շնչով պարուրելով՝ մրմնջաց, - ա՛հ, սիրելի՛ս, ինչո՞ւ ես այդքան անհասկացող: Մի՞թե չես կռահում. եկել եմ քեզ սփոփելու: - Կնոջ ուռուցիկ ստիճքները սադրանքով հպվեցին տղամարդուն, նուրբ մատները շոյելով հարթեցին հոնքամիջի կնճիռը, - Մայքլ, խոժոռվելու ժամանակը չէ: Չէ՞ որ մենք մի ամբողջ ամիս չենք տեսնվելու:

- Եվ ինչպե՞ս ես ուզում սփոփել:

- Դու ինքդ էլ լա՛վ գիտես. ամենահաճելի ձևով: - Ավելի ամուր հպվելով՝ նա խոստումնալից մի համբույր դրոշմեց Մայքլի շուրթերին: - Ուզում եմ հիշեցնել, քանի ապրում եմք, պետք է վայելենք կյանքի հաճույքը:

Եվ ինչպես բիբլիական Ադամը, Մայքլը ևս չկարողացավ դիմակայել գայթակղությանը: Տղամարդու մարմինն արծագանքեց կնոջ բացահայտ կանչին, իրեն հպված փափուկ հրապուրիչ կորություններն արթնացրին նրա ցանկությունը: *Միգուցե և իրավացի՞ է, և դա այն է, ինչ այս պահին ինձ անհրաժեշտ է՝ զգալ, որ կյանքը շարունակվում է, անցավ մտքով, և նա, տարակուսանքները իրենից վանելով, Ալիսի հետ գնաց ննջարան...*

Կրքի պահն անցավ՝ սովորականի պես թողնելով անբավարարության ու դատարկության զգացում: Մայքլը զղջում էր, որ տրվեց ցանկասիրությանը: Հոգու ցավին, որ այնպես էլ չմեղմացավ, ավելացան հիասթափությունն ու հուսահատությունը: Մի՞թե ինքը զգացմունքների առումով միանգամայն անկարող է և իր անձնական կյանքում ի վիճակի չէ նվաճել այն բարձունքները, որոնց հասել է երաժշտության ասպարեզում:

Երբևէ կհանդիպի՞ *Նրան...* կսիրի՞, կզգա՞ փոթորկահույզ զգացմունքների այն բերկրանքը, որ հարուցում է երաժշտությունը, թե՞ դատապարտված է մինչև կյանքի վերջը բավարարվելու անցողիկ կրքի խղճուկ փշուրներով, որ տալիս է ու ստանում:

...Մայքլը տակավին չէր բոլորել իր տասնվեց տարին, երբ դաժան ավտովթարը նրան զրկեց ծնողներից... Եվ ահա վեց տարի անց տաղանդավոր երիտասարդին ներկայացրին հայրենիքից տարագրված նվագավարին, և այդ հանդիպումը որոշեց նրա ապագան: Եթե չլիներ իր ուսուցիչը, նա երբեք չէր դառնա այն, ինչ դարձել էր: Այդ զարմանալի հոգու տեր անձնավորությունը Մայքլին միանգամից վերցրեց իր հովանավորության տակ, և ապագա նվագավարի համար սկսվեցին լարված աշխատանքով հագեցած օրերը, ամիսները... Իր երիտասարդական տարիները նա ամբողջությամբ նվիրեց մասնագիտության կատարելագործմանն ու հաջողության նվաճմանը: Եվ այժմ, երբ որպես նվագավար արդեն կայացել էր, զգում էր, որ իր կյանքում իրեն շատ կարևոր մի բան է պակասում:

Մայքլը հոգնել էր իր մենությունից: Ի վերջո, ինքն արդեն երեսուներոթ տարեկան է, ժամանակն է մտածել ընտանիք կազմելու մասին: Սակայն նա ուներ իր սկզբունքները՝ ամուսնանալ սիրելով և լոկ այն կնոջ հետ, որին կարող է վստահել ու համարել կյանքի ընկեր, որը հասկանա իրեն, հոգեպես մոտ լինի ու կիսի ոչ միայն լավ օրերի ուրախությունը, այլ նաև նեղ օրերի դառնությունը: Այսօր նա ավելորդ անգամ համոզվեց, որ Ալիսն այն կինը չէ, որ նրան հարկավոր է:

Մայքլը հառաչեց. ամեն դեպքում ինքը մտադիր էլ չէր նրա ձեռքը խնդրելու: Ալիսը չափազանց հեռու էր իր երևակայած կատարելության մարմնացումը լինելուց, իրենց միջև հոգեկան մերձավորության ճշույլ չկար ու չէր էլ կարող լինել: Երկու

տարին բավարար էին, որ նա հասկանար, թե ինչպիսի դատարկություն էր քողարկում այդ կնոջ հրապուրիչ արտաքինը, և լիովին հիասթափվեր: Իրենց ձգտումները բացարձակապես տարբեր էին. Ալիսին հետաքրքրում էին սոսկ շքեղ կյանքի հաճույքները: Նա չէր էլ փորձում հասկանալ, թե Մայքլը ինչով է ապրում, և նրա համերգների ժամանակ չէր թաքցնում իր ձանձրույթը: Սակայն համերգից հետո կատարելապես կերպարանափոխվում էր և Մայքլի կողքին հպարտ կանգնած, աջ ու ձախ ժպիտներ շռայլելով՝ շնորհավորանքներ էր ընդունում:

- Մայքլ, ո՞ւր ես, - հնչեց Ալիսի վիրավորված ձայնը:

- Ի՞նչ... - Մայքլը սթափվեց իր մտքերից. կնոջ փիրուզագույն աչքերը հանդիմանությամբ նրան էին նայում, - կներես, մտքերով էի տարվել:

Ալիսի մատներն սկսեցին ծուլորեն խաղալ տղամարդու կուրծքը ծածկող խարտյաշ մազերի հետ:

- Ուզո՞ւմ ես իմանալ, ինչի՞ մասին էի մտածում: - Կնոջ դեմքին երազկոտ ժպիտ երևաց: - Մոտենում եմ Ծննդյան տոները, և այս տարի ես քեզնից հատուկ նվեր եմ ակնկալում:

- Իսկ ի՞նչ նվեր ես ուզում ստանալ:

- Նշանի մատանի, - առանց այլևայլության խոստովանեց նա: - Մայքլ, ես փափագում եմ քո կինը դառնալ:

- Հը՛-մ... այսօր ես տրամադրված չեմ այդ մասին խոսելու, - զգուշությամբ խույս տվեց Մայքլը: - Ալիս, արի՛ չչտապենք: Ցավում եմ, սակայն տոներին այստեղ չեմ լինելու: Քանի որ դեկտեմբերի վերջին երևանում համերգներ ունեմ, այս անգամ որոշել եմ Նոր տարին դիմավորել իմ հայրենիքում:

- Եվ ինչո՞ւ եմ այդ մասին միայն հիմա իմանում:

Մայքլը քնծիծաղ տվեց.

- Որովհետև Միջերկրական ծովի ափին հանգստանում էիր բարձրաշխարհիկ տիկնոջ հոգնեցուցիչ պարտականություն-

ներից, ապա Փարիզում զբաղված էիր նորածն լաթեր գնելով:

Ալիսը կամակորոթյամբ սեղմեց շուրթերը.

- Միևնույն է՝ մենք պետք է խոսենք: Մայքլ, ժամանակն է, որ օրինականացնենք մեր հարաբերությունները: Արդեն երկու տարի է, որ հանդիպում ենք, և ես հոգնել եմ այս անորոշությունից: Դու ինձնից հետզհետե հեռանում ես:

- Կարծում ես մեր անուսնությունով բոլոր խրթին հարցերը կլուծվե՞ն: Թե՞ ինչ-որ հրաշքի շնորհիվ կսկսենք միմյանց հասկանալ և իրար ավելի մոտ կդառնանք: - Մայքլը դառը քնծիծաղ տվեց, ապա միանգամից լրջանալով՝ մեղմ ձայնով ասաց, - Ալիս, ես քեզ հետ միշտ էլ անկեղծ եմ եղել: Դու ինքդ լավ գիտես, որ մեր միջև սեր չկա, մեզ միայն անկողինն է կապում, իսկ դա բավարար չէ իսկական ընտանիք ստեղծելու համար:

Նրա գլխում հանկարծ մի միտք ծագեց.

- Միզուցե դու երեխա՞ ես ուզում:

Ալիսը սրտնեղությունից կարմրատակեց.

- Ինքդ էլ գիտես, որ ոչ: Ես կգերադասեի, որ առաջիկա մի քանի տարին ապրեիք միմիայն մեզ համար: Ես քեզ արժանավայել կին կլինեմ, Մայքլ, խոստանում եմ: Դու կհպարտանաս ինձնով: - Նա համոզվածությամբ ասաց, - կտեսնես, մենք չնաշխարհիկ կյանք կունենանք: Ես քեզ հետ կշրջագայեմ, կլինեմ քո բոլոր համերգների, քո պատվին կազմակերպված հանդիսավոր ընդունելություններին...

Աստված մի՛ արասցե, սոսկումով մտածեց Մայքլը և հեզմական ձայնով ընդհատեց Ալիսի փայլուն ծրագրերի շարադրանքը.

- Հա՛, իհարկե, աստեղային ժամիս ինձ հետ կփայլես ու մեծագույն հաճույքով կկիսես իմ փառքը, իսկ առաջին իսկ անհաջողությանս դեպքում ինձ կլքես ու կպատսպարվես միլիո-

նատեր հայրիկիդ ապահով թևի տակ: Ի դեպ, ես չեմ պատկերացնում իմ ընտանիքը առանց երեխաների:

Ալիսը գունատվեց.

- Եվ դա դո՞ւ ես ասում: Քո թանկագին երաժշտությունից բացի, քեզ համար այլևս ոչինչ գոյություն չունի: Դու ընդհանրապես ինձ չես նկատում: Ի՞նչ իրավունք ունես երեխայի մասին խոսելու, եթե զբաղված ես միայն քեզնով: Չե՞ս վախենում, թե նա կխանգարի քեզ:

- Դա ինքս կորոշեմ: Եվ ես ասում եմ զուտ ճշմարտությունը: Ասում եմ այն, ինչը ապացույցի կարիք չունի: Ավա՛ղ, Ալիս, բոլոր փաստերը քո դեմ են: Կներես, գիտեմ՝ քեզ ցավ եմ պատճառում, բայց համոզված եմ, որ մենք միասին ապագա չունենք: Ես ուզում եմ ազնիվ լինել. ժամանակն է, որ վերջ տանք մեր հարաբերություններին: Դրանք մեզ ոչ մի ուրախություն չեն պատճառում և դարձել են լոկ տաղտկալի սովորություն:

Իր թովչանքին վստահ կինը, որ մշտապես շրջապատված էր սիրահետող տղամարդկանցով, դժվարանում էր հավատալ. մի՞թե Մայքլը իրոք առաջարկում է բաժանվել: Իր կարկամած հայացքը տղամարդուն հառած՝ դեռ հույս էր փայփայում, թե այդ բառերը հենց այնպես է ասում: Սակայն դեմքի վճռական արտահայտությունը, համառությամբ սեղմված շուրթերը հաստատում էին՝ այդ խոսքերը պատահաբար չէ, որ ասվեցին: Մայքլը ամեն բան հիմնովին կշռադատել է և իր որոշումից հետ չի կանգնի: Համատեղ գեղեցիկ կյանքի բոլոր ծրագրերը խորտակվեցին: Ալիսը քարացավ՝ գիտակցելով, որ ամեն ինչ վերջացած է, ապա զայրույթի արցունքները ցայտեցին աչքերից:

- Ո՛չ, ես չեմ ուզում բաժանվել: Ստո՛ր, գարշելի՛, - հուսահատ հեկեկալով՝ նա սկսեց իր անզոր բռունցքներով հարվածել

տղամարդու մկանուտ կրծքին, - տականք, երկու տարի ինձնից օգտվեցիր, հիմա էլ անպետք լաթի պես դե՞մ ես նետում:

Մայքլը, նրա ձեռքերը բռնելով, փորձեց խաղաղեցնել իր ավերից դուրս եկած կնոջը.

- Խնդրո՛ւմ եմ, հանգստացի՛ր:

- Թո՛ղ ինձ... - նա բորբոքված վեր թռավ և հատակից հապճեպ հավաքելով իր հագուստի կույտը՝ նետվեց լոգասենյակ:

Տղամարդը, ոտքերն իջեցնելով, նստեց տեղում, գլուխն առավ ավերի մեջ ու տնքաց: *Տե՛ր Աստված, այս ի՞նչ ահավոր օր է:* Որոշ ժամանակ անշարժ նստել էր՝ ջանալով վերագտնել հոգեկան հավասարակշռությունը, ապա, մտածելով, որ հարկավոր է հագնվել, դժկամությամբ ելավ:

Նա հյուրասրահում իր համար սառույցով վիսկի էր պատրաստում, երբ լսվեց բարակ կրունկների արագ կտկտոցը, և կազմ ու պատրաստ՝ հայտնվեց Ալիսը: Կինը կարողացել էր իրեն տիրապետել և գլուխը հպարտ ետ գցած՝ գոռոզ անտարբերությամբ անցավ սիրեկանի կողքով: Սակայն դուրս գալիս չդիմացավ և, առանց շրջվելու, ատամների արանքով սպառնալի շարտեց.

- Մի՛ կարծիր, թե հեշտությամբ կարծես ինձնից: - Այնուհետև դուրս գնաց՝ շրխկոցով փակելով դուռը:

Մայքլը կնճռոտվեց: *Գրողի ծոցը գնաս...* Խմելու ցանկությունը սաստկացել էր: Վիսկիով բաժակը ձեռքին՝ նա սկսեց ջղային ետ ու առաջ քայլել և հանկարծ մտաբերեց, թե ինչ կարևոր բանով պետք է զբաղվեր: Չէ՞ որ անհրաժեշտ էր դիտել այդ երգչուհու ելույթը: Նրա հայացքն ինքնաբերաբար ուղղվեց պատի ժամացույցին. արդեն ժամը տասն էր: Տղամարդը, հոգոց հանելով, մտածեց, որ երկու ժամ տևող տեսագրությունն ընկալելու համար իրեն հարկավոր է ուշքի գալ: Այո՛, թարմացնող ցնցուղ ու մի գավաթ թունդ սուրճ, և ինքը ի

վիճակի կլիճի զբաղվել գործով: Կարճ ժամանակ անց նա, գոհունակորեն շունչ քաշելով, ընկողմանեց բազկաթռոչին և սեղմելով միացման կոճակը՝ հայացքը հառեց հեռուստացույցի լուսապաստառին:

Վեհաքայլ բեմ մտնող երիտասարդ կինը բարձրահասակ էր ու նրբագեղ: Նրա բաց-մանուշակագույն զգեստը թեև համեստ էր, բայց նրբաճաշակ: Սամույրի մորթի հիշեցնող մետաքսաշող երկար վարսերը հերակալով վեր էին բարձրացված ու սփռված թիկունքին՝ ավելի ընդգծելով դեմքի քնքուշ դիմագծերն ու բարձր այտոսկրերը: *Լավ բեմական արտաքին ունի:*

Մայքլի տեսած լուսանկարները նրա հրապույրն ամբողջությամբ չէին արտահայտում: *Կեցվածքն էլ լավ է*, հիացնունքով նշեց նա, երբ երգչուհին թագուհու վսեմությամբ գլուխ տվեց, ապա ժպտաց նվազակցողին՝ հասկացնելով, որ ինքը պատրաստ է:

- Կռռնկ, ուստի՞ կուզաս...

Աստվածային ծայնի առաջին իսկ հնչյուններից տղամարդը փշաքաղվեց: Երգչուհու ողջ հոգին էր արտացոլված այդ ծայնում: Նրա կատարումը հուզական էր, կրքոտ, իմաստալից, ծայնի հնչողությունը՝ անթերի, հագեցած ամենանրբին երանգներով: Թավշե դրամատիկ սոպրանոն թափանցում էր Մայքլի հոգու խոր գաղտնարանները, ազդում սրտի ամենաքնքուշ լարերի վրա՝ պարզաբերելով այն մխիթարությունը, որի կարիքը նա ուներ: Աչքերը լցվեցին, սակայն տղամարդը թարթեց, որ արցունքներն իրեն չխանգարեն, և, ասես հմայված, հայացքը չէր կարողանում կտրել երգչուհու չքնաղ դեմքից:

Մայքլը հասկացավ, թե ինչու է նրա զգեստը մանուշակագույն. սև թանձր թարթիչներով երիզված աչքերը առավոտվացողով փայլող մանուշակների էին նման: Կնոջ ոգեշունչ դեմ-

քը այնքան արտահայտիչ էր, անպաշտպան, որ Մայքլի սիրտը սեղմվեց: Ծիծեռնակի թևեր հիշեցնող նուրբ հոնքերը երազանքով վեր էին բարձրացել, գեղեցիկ գծագրված, փքուն շուրթերից ձայնը հոսում էր առանց որևէ ճիգի, ինքնաբուխ:

Երգն ավարտվեց, սկսվեց հաջորդը: Ռոմանսներին փոխարինեցին մեներգերը՝ Նորմայի, Վիոլետայի, Աիդայի, Տոսկայի, Լեոնորայի, Սանտուցայի, Տուրանդոտի, Չիո-Չիո-սանի... դերերգեր, որոնք օպերային արվեստում դրամատիկ սուպրանոյի գլուխգործոցներն են համարվում:

Մայքլն այնքան կլանված էր ունկնդրում, որ ինքն էլ չնկատեց, թե ժամանակն ինչպես անցավ. երկու ժամը թռավ մեկ ականթարթի պես: Նա պարզապես զնայված էր՝ այդքան երիտասարդ և այսպիսի հասուն կատարում: Իրոք՝ նա հրաշք է: Այժմ Մայքլը միանգամայն համաձայն էր իր ուսուցչի հետ՝ այս կինը երևույթ է, և ինքը մեծագույն հաճույքով կկատարի հանձն առած առաքելությունը՝ շնորհառատ երգչուհուն օգնել գրավելու իր արժանավայել տեղը աշխարհահռչակ բեմերում, մյուս աստղերի կողքին:

Նա անջատեց տեսագրիչը, տեսաերիզը դրեց սեղանին, որ չմոռանա վերցնել, և նայեց ժամացույցին. երևանում աշխատանքային օրն արդեն սկսվել էր: Գործելու ժամանակը եկել էր: Գտնելով ծոցատետրում նշված հեռախոսահամարը՝ Մայքլը զանգահարեց Արամ Խաչատրյանի անունը կրող համերգասրահ, սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր նվագավար Վարուժան Տեր-Սիմոնյանին...

...Ես երգելու եմ նրա համար, աղոթքի նման կրկնում էր Շաքեն, երբ ողջույնի ծափահարությունների ներքո բեմ մտավ, երբ Միքայելի՝ հավատով լեցուն աչքերին նայելով՝ ժպիտով

հասկացրեց, որ ինքը պատրաստ է: Դահլիճում սպասողական լռություն էր: Յնչեց «Տրավիատայի» երաժշտությունը, երգչուհու շուրթերը բացվեցին, և արտաբերված առաջին իսկ հնչյուններից Միքայելը հասկացավ, որ Շաքեն այսօր կցնցի բուլորին: Արդեն առաջին ստեղծագործությունը՝ Վիոլետայի մեներգը, նա երգեց անկաշկանդ ներշնչանքով՝ փայլուն կերպով հաղթահարելով դժվարին ձայնանցումները: Հետևյալը Աիդայի մեներգն էր, և Շաքեն վստահությամբ սկսեց. «Վերադարձիր հաղթանակով...»: Նրա ձայնը, որ նախորդ մեներգում արծաթափայլ էր, քնարական, այժմ, թավշյա կրծքաերանգով հագեցնալով, արտահայտում էր հերոսուհու տառապանքը. Աիդան կանգնած էր սոսկալի երկրնտրանքի առաջ և երկու դեպքում էլ կարող էր կորցնել սիրելի մարդու՝ հորը կամ սիրեցյալին: Մեներգի վերջին մասը՝ աղոթքը, նա երգեց այնպիսի ջերմեռանդ մեղմությամբ, որ ամբողջ դահլիճը սսկված՝ վախենում էր շունչ քաշել: Հիացած ունկնդիրների բուռն ծափահարությունները երկարաձգվում էին: Մեներգերը հաջորդում էին մեկը մյուսին, և երգչուհու հուզաթաթավ ձայնը թևածում էր սրահի կամարների տակ՝ զնայլանքով լցնելով բուլորի հոգիները: Շաքեն տրվել էր զգացմունքների երաժշտությանը, որ ծփում էր իր մեջ: Այդ դյուքիչ երաժշտությունն էր նրա ձայնում, այդ երաժշտությունն էր բխում Միքայելի ձեռքերից: Եվ նրանց երկուսի հոգիները միավորվել էին ներդաշնակ զգացմունքների երաժշտությամբ...